

Աննա ՊԱՊՈՅԱՆ

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆՆԱԿԱՆ ԱԴԱՊՏԱՑԻԱՆ

Արդի սոցիալական, հոգեբանամանկավարժական հետազոտությունները հաստատում են այն փաստը, որ ներկա ժամանակներս բազմաթիվ կենսագենետիկ, սոցիոգենետիկ և հոգեգենետիկ գործոնների ազդեցության հետևանքով ավելի են շատացել զարգացման և վարքի շեղումներով երեխաները:

Մինչ վերջին ժամանակներս Հայաստանի ավանդական կրթական համակարգում այս կամ այն շեղում ունեցող երեխաներն ստանում էին կրթություն միայն հատուկ կրթական հաստատություններում, տանը կամ տուն ինտերնատներում, սակայն վերջերս Հայաստանում տեղի ունեցան զգալի փոփոխություններ. փոխվեց հասարակության վերաբերմունքը առողջական խնդիրներ ունեցող և հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների նկատմամբ: Այժմ ավելի շատ է գիտակցվում, որ հոգեֆիզիկական խանգարումները չեն բացառում մարդկային էությունը (զգալու, անհանգստանալու կարողությունները), ինչպես նաև հասարակական փորձի յուրացումը:

Ժամանակն է հասկանալու, որ յուրաքանչյուր երեխայի զարգացման համար անհրաժեշտ է ստեղծել բարենպաստ պայմաններ՝ հաշվի առնելով նրա անհատական ընդունակությունները, կարողությունները և կրթական պահանջները:

Ներառական կրթությունը դիտարկվում է որպես ուղի և հնարավոր միջոց՝ սահմանափակ հնարավորություններով անձանց հասարակության մեջ ներառելու և նրանց հարմարումը ապահովելու համար: Սակայն ներառական կրթության ներմուծումը ոչ միայն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար է բարենպաստ ազդեցություն ունենում, այլև վերջիններիս նորմալ զարգացող տարեկիցների համար:

Ուսուցման ընդհանուր պրոցեսում նորմալ զարգացման ընթացք ունեցող երեխաները, շփվելով հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ, ձևավորում են հանդուրժողականություն, էմպատիա նրանց նկատմամբ, ձգտում օգնել նրանց, իսկ հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մոտ ցածրանում է ագրեսիվության և անհանդուրժողականության ռիսկը: Համատեղ ուսուցման իրականացման փորձը վկայում է, որ այդ բարդ գործընթացը պահանջում է դպրոցի սովորական կենսաձևի վերակառուցում:

Ներառական կրթության ներմուծումը հանրակրթական դպրոցներ մեծ փոփոխության է ենթարկում նաև մանկավարժի աշխատանքը:

Հոգեբանական հարմարման տեսանկյունից անհրաժեշտ է դառնում կազմակերպել համապատասխան աշխատանքներ՝ ուղղված հատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտին մանկավարժների, աշակերտների և ծնողների կողմից ընդունմանը, ինչպես նաև սահմանափակ հնարավորություններով սովորողի համար պայմաններ ստեղծել՝ ընդգրկվելու նոր միջավայր և ընդունելու տվյալ կրթական հաստատությունում գործող նորմերն ու կանոնները:

Ներառական կրթության առաջնային խնդիրներից մեկը մասնագետների անբավարար պատրաստվածությունն է:

Այսպիսով, ներառական կրթության ներմուծման խնդիրը հակասություն է առաջացնում. մի կողմից՝ անհրաժեշտ է արագ ներդնել ներառական կրթությունը դպրոցում, իսկ մյուս կողմից՝ չունենք ներառական կրթության ինտեգրմանը պատրաստ մանկավարժներ: Գիտական գրականության մեջ «պատրաստվածություն» ասպեկտը քննարկվում է տարբեր հայեցակարգերով:

Վ. Ա. Կրուտեցկին սահմանում է «պատրաստվածությունը» ինչպես գործունեության պիտանիություն՝ արտահայտված ակտիվ և դրական վերաբերմունքով, դրանով զբաղվելու հակումով, որն անցնում է զարգացման բարձր մակարդակի՝ դառնալով տարվածություն: «Պատրաստվածություն» հասկացությունը նա դիտարկում է նաև որպես համապատասխան բնագավառում գիտելիքների, կարողությունների և հմտությունների առկայություն:¹

Լ. Վ. Կանտրաշևան գտնում է, որ պատրաստվածությունը մանկավարժական գործունեությանը ենթադրում է այնպիսի անհրաժեշտ հարաբերությունների, դիրքորոշման, անձի որակների և հասկանիչների ձևավորում, որոնք ապահովում են ապագա մասնագետին գիտակցաբար, բարեխղճորեն, անելիքն իմանալով գործի անցնել և ստեղծագործաբար կատարել իրենց մասնագիտական գործառույթները և պարտականությունները:²

Առկա մոտեցումների վերլուծությունը ցույց է տալիս, որ հաճախ պատրաստվածությունը դիտարկվում է որպես գիտակցվածության որոշակի իրավիճակում պատասխանատվորեն գործելու կամ դրան նախապատրաստվելու ֆունկցիոնալ համակարգ:

Մանկավարժի մասնագիտական գործունեությանը անձի պատրաստվածությունը ենթադրում է 3 հիմնական տեսակի առանձնացում՝ ֆիզիկական, հոգեբանական և հատուկ: Ֆիզիկական պատրաստվածությանը չենք անդրադառնա, քանզի հոգեբանամանկավարժական գործունեության մեջ անձին չեն ներկայացվում հատուկ ֆիզիկական պահանջներ (բացառությամբ՝ հասարակայնորեն ընդունված նորմերը և պահանջները):

Մենք հակված ենք դիտարկելու ներառական կրթական համակարգում մասնագիտական գործունեություն ծավալելու պատրաստվածությունը՝ որպես անձնային որակ: Այս առումով մասնագիտական գործունեության իրականացման պատրաստվածությունը կախված է մանկավարժի անհատական առանձնահատկություններից:

Կախված «հոգեբանական պատրաստվածություն» հայեցակարգի սահմանման մոտեցումից՝ տարբեր հեղինակների կողմից առանձնացվում են նրա կառուցվածքը, հիմնական բաղադրիչները, կառուցվում են նրա ձևավորման ուղիները:

¹ Կրուտեցկի Վ. Ա., Մանկավարժական հոգեբանության հիմունքները, Եր., 1976, 443 էջ:

² Инклюзивное образование в России и Москве. Статистика и справочные материалы// <http://www.dislife.ru/flow/theme/4696/>

Տվյալ խնդրի ուսումնասիրություններն սկսվել են 1950-ական թվականներին, երբ մասնագիտական պատրաստման անհրաժեշտություն էր առաջացել:

Պատրաստվածության ամենատարածված սահմանումը հնչում է հետևյալ կերպ. այն մասնագիտական գործունեության հաջող կատարման պայման է, որը պետք է ձևավորվի և կատարելագործվի ինչպես անձի կողմից, այնպես էլ պետության կողմից իրականացվող միջոցառումների ամբողջական համակարգով:

Ներառական կրթության զարգացման արդեն իսկ առաջին փուլից հանրակրթական դպրոցի ուսուցիչների մոտ (մասնագիտական, մեթոդական) անմատչելիության սուր խնդիր է առաջանում հատուկ կրթության կարիք ունեցող երեխաների հետ աշխատելու: Ուսուցիչների մոտ բացահայտվում են ներառական միջավայրում աշխատելու մասնագիտական կոմպետենտության թերություններ, ինչպես նաև հոգեբանական արգելքներ և մանկավարժի մասնագիտական կարծրատիպերի առկայություն:

Հանրակրթական դպրոցի մասնագետներն ունեն մասնագիտացված համալիր օգնության կարիք: Նրանց կարևորագույն խնդիրն է կարողանալ աշխատել կրթական տարբեր հնարավորություններ ունեցող երեխաների հետ և հաշվի առնելով նրանց յուրահատկությունները՝ յուրաքանչյուրի նկատմամբ ցուցաբերել յուրահատուկ մանկավարժական մոտեցում:

Մակայն մանկավարժների համար հիմնական հոգեբանական «արգելք» են վախը անհայտի, ներառման գործընթացի մյուս մասնակիցներին վնասելու, բացասական դիրքորոշումները և նախապաշարմունքները, մանկավարժների մասնագիտական անվստահությունը, փոխվելու դժկամությունը, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ աշխատելու հոգեբանական անպատրաստվածությունը: Մա լուրջ խնդիր է դնում ոչ միայն կրթության ոլորտի հոգեբանական կողմի, այլ նաև մեթոդական ծառայությունների և, որ ամենակարևորն է, ներառական կրթության սկզբունքներն իրականացնող կրթական հաստատությունների ղեկավարների առջև:

Զարգացման խանգարումներով երեխաներին ընդհանուր կրթության գործընթաց ներառող ուսուցիչների գործունեության արդյունավետության վրա ազդող հիմնարար հոգեբանական գործոնը այդ երեխաներին հոգեպես ընդունունելն է:

Մակայն, ըստ հոգեբանների, մանկավարժական գործունեության մեջ էմոցիոնալ ընդունումն ունի մասնագիտական «արգելք», մանկավարժը հոգեբանորեն չի ընդունում այն երեխային, որի ուսուցման հաջողության մեջ վստահ չէ: Մանկավարժը չգիտի, թե ինչ եղանակով ստուգի գիտելիքները:

Զգայական խանգարումներով երեխաների դեպքում առաջանում է նաև «չհասկանալու» արգելքը: Առավել մեծ դժվարություն են ներկայացնում այն երեխաները, որոնք ունեն ինտելեկտի խախտում: Նրանք ակնհայտորեն չեն կարող յուրացնել հանրակրթական դպրոցի ուսումնական ծրագիրը, նրանց համար անհրաժեշտ է հատուկ ուսումնական, անհատական ծրագրի օգտագործում, որը հանրակրթական դպրոցի մանկավարժի համար չափազանց դժվար է: Նրանց հետ

աշխատանքում պետք է հաշվի առնել կրթական նպատակները, այլ ոչ թե ակադեմիական արդյունքները:

Հատուկ կրթական կարիքներ ունեցող երեխաների համար հարկավոր է կազմակերպել հատուկ մեթոդական աշխատանքային ուսուցում և այս երեխաների սոցիալ-մշակութային ադապտացումը հասարակությանը:

Ուսուցիչները, որոնք ունեն ներառական կրթական համակարգում աշխատելու արդյունավետ փորձ, առաջարկում են ներառելու հետևյալ եղանակները.

1. կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաներին ընդունել այնպես, «ինչպես մնացած բոլոր երեխաներին դասարանում»,
2. ընդգրկել նրանց նույն գործունեության մեջ, սակայն նրանց առաջ դնել տարբեր խնդիրներ,
3. ներգրավել երեխաներին խմբային աշխատանքներում,
4. օգտագործել ակտիվ ուսումնական ձևեր և խաղեր, ծրագրեր, հետազոտություններ դպրոցից դուրս:

Ներառական կրթության ներմուծումը դպրոց մեծապես փոխում է ուսուցչի դերը:

Ղ. Կ. Լիպկին և Գարթները գտնում են, որ ուսուցիչները նպաստում են սովորողների ակտիվացման ներուժին՝ համագործակցելով միջոցիսցիպլինար միջավայրում այլ մանկավարժների հետ՝ առանց արհեստականորեն առանձնացնելու հատուկ և ընդհանուր մանկավարժների: Նրանք աշակերտների հետ ներգրավվում են տարաբնույթ շփումների մեջ, ինչի շնորհիվ էլ ճանաչում են յուրաքանչյուրին անհատապես: Բացի այդ, մանկավարժները դպրոցից դուրս ներգրավված են ավելի լայն սոցիալական շփումների, որոնց թվին են պատկանում սոցիալական աջակցության ռեսուրսները և ծնողների հետ շփումը:³ Նման մասնագիտական դիրքորոշումը ուսուցիչներին թույլ է տալիս հաղթահարել իրենց մտահոգությունը և անհանգստությունը, հասնել մասնագիտական հմտության միանգամայն նոր մակարդակի՝ հասկանալով աշակերտներին և իր կոչումը:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ մանկավարժի պատրաստվածությունը ներառական կրթական համակարգում ունի երկու հիմնական ցուցանիշ՝ մասնագիտական պատրաստվածություն և հոգեբանական պատրաստվածություն.

«Մասնագիտական պատրաստվածություն» հասկացությունը դիտարկվում է որպես տեսական գործունեության և հասկացության կատեգորիա, մի կողմից՝ որպես գործընթացի նախապատրաստման արդյունք, իսկ մյուս կողմից՝ որպես ինչ-որ բանի դիրքորոշում:

Մասնագիտական պատրաստվածության կառուցվածքը ենթադրում է հետևյալ տարրերի առկայությունը.

- տեղեկատվական պատրաստվածություն,
- մանկավարժական համապատասխան տեխնոլոգիաների տիրապետում,
- գիտելիքներ հոգեբանության հիմունքներից և ուղղիչ մանկավարժությունից,
- գիտելիքներ երեխաների անհատական տարբերությունների մասին,

³ Ярская-Смирнова Е., Лошакова И. Инклюзивное образование детей-инвалидов. Социологические исследования, 2003, N 5, стр. 100-106.

- պատրաստակամություն վերափոխելու ուսուցման գործընթացի ողջ պրոցեսը,
- պատրաստակամություն մասնագիտական համագործակցության և ուսուցման:

Հոգեբանական պատրաստվածությունը գործունեությանը խնդրի հաջող լուծման հիմքն է, որը ներառում է բոլոր անհրաժեշտ և բավարար առաջիկա գործողությունների տարրերը: Հոգեբանական պատրաստվածությունը գործունեությանը պարտադիր պայման է ոչ միայն այն սկսելու, այլ նաև արդյունավետ լուծման համար:

Ուսուցման մեթոդներ: Այսօր բազմաթիվ մեթոդական նորարարությունները կապվում են ուսուցման ինտերակտիվ մեթոդների կիրառման հետ: Ինտերակտիվ նշանակում է փոխանցել գիտելիքների կամ գրույցի, երկխոսության մեջ գտնվել ինչ-որ մեկի հետ:

Ինտերակտիվ ուսուցման հիմնական բնութագրիչներն են.

- ուսուցմանը նպաստող միջավայր, որտեղ երեխան զգում է իր մասնակցության կարևորությունը,
- աշակերտի՝ որպես անձի կարևորությունը և մտավոր կարողությունները:

Ինտերակտիվ ուսուցման էությունն է բոլոր սովորողների ընդգրկումը ճանաչողական գործընթացի մեջ: Այսինքն՝ յուրաքանչյուրն իր անհատական ներդրումն է ունենում ուսուցման գործընթացում, տեղի է ունենում գիտելիքների, մտքերի փոխանակում:⁴

Ինտերակտիվ ուսուցումը բացառում է որևէ մեկի (աշակերտի կամ ուսուցչի) առաջնայնությունը, գերակայությունը մյուսների նկատմամբ: Դասերի ընթացքում կազմակերպվում է անհատական կամ խմբային աշխատանք, կիրառվում են հետազոտական ծրագրեր, դերային խաղեր, փաստաթղթերի և սկզբնաղբյուրների հետ աշխատանք, ստեղծագործական գործունեություն և այլն:

Ինտերակտիվ ուսուցումը գործնականում կիրառելու համար կարևոր պայման է ուսուցչի անձնական մասնակցությունը նման ոճով ուսուցմանը կամ վերապատրաստմանը: Այսինքն՝ ուսուցչը կարող է կարդալ մեծ քանակությամբ գրականություն ուսուցման ակտիվ մեթոդների մասին, բայց դրանք հնարավոր է կիրառել միայն սեփական փորձի շնորհիվ: Ամենալավ մեթոդը որոշակի մեթոդ չունենալն է: Մեկ կամ երկու մեթոդով բավարարվելով՝ չի կարելի դասընթաց վարել: Յուրաքանչյուր դասի համար (պայմաններից կախված) անհրաժեշտ է ընտրել համապատասխան մեթոդ:

Յուրաքանչյուր ուսուցիչ ազատ է մեթոդների ընտրության հարցում: Մեթոդի ընտրությունը շատ կարևոր է, քանի որ ճիշտ ընտրված մեթոդը հնարավորություն է տալիս առավել արդյունավետ իրականացնելու ուսուցման գործընթացը:

Փորձարարական հետազոտությունը: Ստորև ներկայացված է փորձարարական հետազոտություն, որի նպատակն է ներառական կրթական համակարգում աշխատող մանկավարժների հոգեբանական պատրաստվածության գնահատումը:

⁴ Салевко Г.К. Педагогические технологии на основе активизации, интенсификации и эффективного управления УВП. М., 2005.

Հետազոտության առարկան ներառական կրթական համակարգում աշխատելու մանկավարժների հոգեբանամանկավարժական պատրաստվածության պայմանների և միջոցների ձևավորումն է:


Աշխատանքում օգտագործել ենք հետևյալ համալիր մեթոդները և մեթոդիկաները. *տեսական մեթոդներ* - հոգեբանության գիտական և ուսումնադաստիարակչական մեթոդական գրականության տեսական վերլուծություն, *էմպիրիկ մեթոդներ* - հարցազրույց, թեստավորում, զրույց, *փորձարարական տվյալների մշակման մեթոդներ* - ուսումնասիրության արդյունքների քանակական մշակում, տվյալների գրաֆիկական պատկերում, *վիճակագրական մեթոդներ*:

Հետազոտությունն անցկացվել է Գյումրի քաղաքի ներառական կրթություն իրականացնող տարբեր դպրոցներում որին մասնակցել են 15 մանկավարժներ: Հետազոտական աշխատանքը ունեցել է երեք ամիս տևողություն:

Մեր կողմից կիրառվել է հատուկ մշակված ծրագիր, որի հիմնական նպատակն է մանկավարժների հոգեբանամանկավարժական պատրաստության մակարդակի բարձրացումը:


Հոգեբանամանկավարժական պատրաստվածության մակարդակը ծրագրի կիրառումից առաջ

Դիագրամ 1



Հոգեբանամանկավարժական պատրաստվածության մակարդակը ծրագրի կիրառումից հետո

Դիագրամ 2



Ամփոփելով վերը նշվածը՝ եզրակացնենք. մանկավարժների պատրաստվածությունը ներառական կրթական համակարգում աշխատելուն կարող է բնութագրվել դրդապատճառային, անձնային, էմոցիոնալ, ճանաչողական փոխկա-

պակցված բաղադրիչների միջոցով: Դրդապատճառային բաղադրիչի մեջ մտնում են ձգտումը մարդկանց նկատմամբ, սոցիալական դիրքորոշումներում աշխատանքի գերակայությունը: Անձնային բաղադրիչի մեջ են մտնում հանդուրժողականությունը մարդկանց և հատկապես հատուկ կարիքով երեխաների նկատմամբ, ինչպես նաև մասնագիտական անձնային որակները (հուզական կայունություն, գիտակցվածություն, ինքնուրույնություն): Էմոցիոնալ բաղադրիչի մեջ նկատի է առնվում մարդկանց նկատմամբ ցուցաբերվող ապրումակցման մակարդակը: Ճանաչողական բաղադրիչի մեջ են մտնում ոչ խոսքային լեզուն հասկանալու ունակությունը, մարդկանց մասին արագ և ճիշտ դատողություններ անելը, ուրիշների հետ հարաբերություններում հեռատեսություն ցուցաբերելը:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ ներառական կրթական համակարգում աշխատելու մանկավարժների պատրաստվածությունը ցածր մակարդակի է, որը դրսևորվում է ցածր սոցիալական դիրքորոշմամբ, հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ աշխատանքի ցածր շարժառիթով, նրանց նկատմամբ անհանդուրժողականությամբ, նաև այդպիսի երեխաների հետ աշխատանքի մեթոդների մասին տեղեկատվության պակասով:

Տվյալ հանգամանքը պահանջում է ներառական կրթությունն իրականացնող մանկավարժների համար ձևավորել վերապատրաստման հատուկ մշակված համակարգ:

ПСИХОЛОГИЧЕСКАЯ АДАПТАЦИЯ ДЕТЕЙ С ИНКЛЮЗИВНЫМ ОБРАЗОВАНИЕМ

___ *Резюме* ___

___ *А. Папоян* ___

Инклюзивное образование рассматривается как способ и средство социальной интеграции людей с ограниченными возможностями и обеспечивает их регулировку. Введение инклюзивного образования хорошо влияет не только на детей с особыми образовательными потребностями, но и на их нормально развивающихся сверстников. В процессе обучения нормально развивающиеся дети, общаясь с детьми с особыми образовательными потребностями, проявляют терпимость, сочувствие к этим ученикам и пытаются им помочь.

Տեղեկություններ հեղինակի մասին

*Պապոյան Աննա Գարլենի – ԳՊՄԻ հոգեբանության
աւթինն, E-mail: artush.papoyan@mail.ru*